# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ 2

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ

2019 թվականի հոկտեմբերի 15-ին ժամը 13:30-ին, ք. Երևան, Ալ. Մանուկյան 11 հասցեում, տեղի ունեցավ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Ռեկտորատի նիստը:

**Նիստը նախագահում էր՝**

Ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյանը

**Նիստին մասնակցում էին՝**

Ռեկտորատի անդամներ՝

1. Գագիկ Սարգսյանը
2. Վահան Գևորգյանը
3. Մարինա Ասատրյանը
4. Գոհար Հայրապետյանը
5. Անահիտ Հարությունյանը
6. Եղիշ Դավթյանը
7. Անի Մազմանյանը
8. Օֆելյա Պետրոսյանը
9. Կոլյա Բաբայանը
10. Արտակ Ստեփանյանը
11. Անժելա Նուշիկյանը
12. Անահիտ Գրիգորյանը
13. Մեսրոպ Բարբարյանը

Նիստին հրավիրված էր Ուսումնական բաժնի վիճակագիր Ռ. Մարտյանը:

Նիստին ներկա չէին ռեկտորատի անդամներ Էդվարդ Գալտագազյանը, Անդրանիկ Անդիկյանը, Հակոբ Հակոբյանը և Ռազմիկ Գրիգորյանը:

**Նիստն արձանագրեց՝**

ՄՌԿ բաժնի պետ Ա. Մազմանյանը

**Օրակարգ**

1. Ռեկտորատի նոր կազմի ներկայացում:
2. Վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի զեղչման հարցի քննարկում:

3. Գարնանային քննաշրջանի պարտքերի մարման հարցի քննարկում:
4. Միջանկյալ քննությունները նոր ձևաչափով կազմակերպելու առաջարկության քննարկում:
5. Ուսանողների հաճախելիության վերաբերյալ հարցի քննարկում:
6. Իրավախորհրդատուի դիտարկումներ:
7. Վարչական և ֆինանսական գործունեության վերաբերյալ դիտարկումներ:

1. Օրակարգի առաջին հարցով (զեկուցող՝ Դ. Խիթարյան)

Դավիթ Խիթարյանը ներկայացրեց «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտորատի նոր կազմը:

Առաջարկվեց՝

Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:*
*Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

2. Օրակարգի երկրորդ հարցով (զեկուցողներ՝ Ե. Դավթյան, Ա.Հարությունյան, Կ. Բաբայան, Ա. Ստեփանյան)

Ելույթ ունեցան Ֆակուլտետների դեկանները, Հեռակա ուսուցման բաժնի պետը, Մագիստրատուրայի պետը, ներկայացրեցին իրենց ֆակուլտետների խորհուրդների որոշումները ուսանողների ուսման վարձը զեղչելու վերաբերյալ:

Առաջարկվեց՝

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտորի 2018 թվականի օգոստոսի 27-ի N 4 հրամանով հաստատված «Ուսանողներին ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման» կարգը հաստատել՝ 2019-2020թթ. ուս. տարվա առաջին կիսամյակի համար վճարովի համակարգում սովորող ուսանողների նկատմամբ զեղչ կիրառելու ֆակուլտետների, մագիստրատուրայի և հեռակա բաժնի կողմից ներկայացված որոշումները:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:*
*Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

3. Օրակարգի երրորդ հարցով (զեկուցողներ՝ Ե. Դավթյան, Ա. Հարությունյան, Կ. Բաբայան)

Ելույթ ունեցան Ֆակուլտետների դեկանները, Հեռակա ուսուցման բաժնի պետը, ներկայացրեցին զարնանային քննաշրջանի պարտքերի մարմանը հարցը:

Հաշվի առնելով պարտք ունեցող ուսանողների մեծ քանակը (64 ուսանող) Կ. Բաբայանն առաջարկեց ուսանողների պարտքերի մարումը հետաձգել՝ տեղափոխելով ս.թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 22-ը:

Առաջարկվեց՝

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Թույլատրել հեռակա ուսուցման բաժնի ուսանողներին զարնանային քննաշրջանի պարտքերի մարումը տեղափոխել ս.թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 22-ը:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:*
*Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

4. Օրակարգի չորրորդ հարցով (զեկուցող՝ Ռ. Մարտյան)

Ռ. Մարտյանը ներկայացրեց միջանկյալ քննությունները նոր ձևաչափով կազմակերպելու հարցը:

Առաջարկվեց՝

Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:*
*Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

5. Օրակարգի հինգերորդ հարցով (զեկուցողներ՝ Ե. Դավթյան, Ա. Հարությունյան)

Ֆակուլտետների դեկանները ներկայացրեցին ուսանողների հաճախելիության վերաբերյալ հարցը:

Առաջարկվեց՝

Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:*
*Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

6. Օրակարգի վեցերորդ հարցով (զեկուցող՝ Օ. Պետրոսյան)

Ելույթ ունեցավ Իրավախորհրդատու Օ. Պետրոսյանը և ներկայացրեց որոշ իրավական դիտարկումներ:

**Առաջարկվեց՝**

1. Ներկայացված դիտարկումներն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Իրավախորհրդատուին մշակել ուսանողների զեղչման գործընթացը կանոնակարգող իրավական ակտ և ներկայացնել Գիտական խորհրդի հաստատմանը:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:*
*Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

7. <u>Օրակարգի յոթերորդ հարցով (զեկուցող՝ Վ. Գնորգյան</u>)

Ելույթ ունեցավ Վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Գնորգյանը և ներկայացրեց ֆինանսական դիտարկումներ:

**Առաջարկվեց՝**

Ներկայացված դիտարկումներն ընդունել ի գիտություն:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:*
*Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

Ռեկտորի ժ/պ ______________________________ Դ. Խիթարյան

Ռեկտորատի անդամներ՝

Գ. Սարգսյան ______________________

______________________

Վ. Գնորգյան

______________________

Գ. Հայրապետյան

Մ. Ասատրյան ______________________

Ա. Հարությունյան

______________________________

Հ. Հակոբյան

__________________________________

Ե. Դավթյան

___________________________________

Ա. Նուշիկյան

__________________________________

Օ. Պետրոսյան

__________________________________

Ա.Գրիգորյան

__________________________________

Կ. Բաբայան

____________________________________

Ա. Անդիկյան

_________________________________

Ա. Ստեփանյան

____________________________________

Մ. Բարբարյան

________________________________

Է. Գալտագազյան

____________________________________

Ռ. Գրիգորյան

__________________________________

Ա. Մազմանյան

__________________________________

Քարտուղար՝ ______________________________________________Ա. Մազմանյան